ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆԻ «ՏՐՏՈՒՆՋՔ»-Ի ՆՈՐՈՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

ՎԱՉԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ

«Ֆրիկի ըմբոստ ու յանդուգն աստուածամարտ ոգին» մեր քնարերգության մեջ իր հետագա արտահայտությունը ստացավ միայն նրանից վեց հարյուրամյակ հետո հայ վաղամեռիկ հանճարի՝ Պետրոս Դուրյանի «Տրտունջք» բանաստեղծության մեջ[1].

Թող անեծք մ'ըլլամ քու կողըդ խըրիմ,
Թող հորջորջեմ քեզ «Աստված ոխերիմ»[2]:

Հրանտ Թամրազյանի բնութագրմամբ՝ «այդ մշտադալար և խորհրդավոր գեղեցկությունը» ոչ մի ընթերցողի անտարբեր չի թողել՝ թե՛ գրողբանաստեղծ, թե՛ գրականագետ-մտածող…[3]: Այո՛, շատերն են գրել «Տրտունջք»-ի մասին, բազմաթիվ հոդված-ուսումնասիրություններ են լույս տեսել[4], սակայն ասելիքը չի սպառվում այդ հազվագյուտ երկի վերաբերյալ, որովհետև «հավերժական երկերը հավերժական նյութ են նաև գրականագիտության համար…»[5]:

Եթե մտածենք, որ այսօր դեռևս սպառված չէ «Տրտունջք»-ի աշխարհը, պիտի ընդունենք նաև, որ չափազանց շատ բան է ասված ու արված «դարի գլուխգործոցներից մեկի» ստեղծագործական պատմության ու ակունքների մասին: Մեզ հետաքրքրողը այստեղ առավելապես քերթվածքի մուտքն է, նրա առաջին տողերը, որոնք, համոզված ենք, էական նշանակություն ունեն բանաստեղծության ներքին զարգացման համար և նախապատրաստում են «իրադրությունների» հետագա ընթացքը: Իմաստային և հոգեբանական հանգամանալից վերլուծությունը ցույց է տալիս, որ բանաստեղծության ներքին «գաղտնիքը» իր ողջ ծավալով ու խորությամբ ի հայտ է գալիս արդեն այս մասում: Աստծուն և արևին՝ թե՛ համաքրիստոնեական և թե՛ ազգային դիցաբանական աշխարհընկալմամբ այդ ներդաշնակ հասկացություններ-

[1] Տե՛ս **Հ. Բախչինեան**, Ֆրիկի «Գանգատ»ը, «Հայկազեան հայագիտական հանդէս», Լիբանան, 2017, էջ 86:

[2] **Պ. Դուրյան**, Երկեր, Եր., 1981, էջ 52: Բանաստեղծությունից մեջբերված հետագա քաղվածքները այստեղից են:

[3] Տե՛ս **Հր. Թամրազյան**, Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, Եր., 1986, էջ 48:

[4] **Ա. Ս. Շարուրյան**, Պետրոս Դուրյան. կյանքը և գործը, Եր., 1972, էջ 5-25, **Ս. Շտիկյան**, Ա. Շարուրյան Ա., «Պետրոս Դուրյան», «Հայրենիքի ձայն», Եր., 1973, № 16, **Հր. Թամրազյան**, նշվ. աշխ., էջ 48:

[5] **Հր. Թամրազյան**, նշվ. աշխ., էջ 49:

ին միաժամանակ հրաժեշտ տալը խորհել է տալիս:

Անդրադառնալով «Տրտունջք»-ը վերլուծողների գոնե մեծ մասի ուսումնասիրություններին և համոզմունքներին՝ նկատում ենք, որ նրանք բանաստեղծության էության, հոգեբանական ու գեղագիտական արժեքի մասին խոսելիս նրա սկիզբը սովորաբար տեսնում են սոսկ որպես Դուրյանի հրաժեշտի մեղմ խոսքը՝ ուղղված Աստծուն ու արևին.

Է՜հ, մընաք բարով, Աստված և արև,
Որ կը պըլպըլաք իմ հոգվույս վերև…

Արշակ Չոպանյանը, որն իր «Պետրոս Դուրեան. կենսագրական և քննադատական ուսումնասիրութիւն» մենագրությամբ (Թիֆլիս, 1894 թ.) սկիզբ դրեց բանաստեղծի ստեղծագործության գիտական ուսումնասիրությանը, պիտի ասել, որ այստեղ քսան տարին դեռ նոր բոլորած հեղինակը չի հետապնդել Դուրյանի առանձին տաղերը վերլուծելու նպատակ, և բնական է, որ նա ինչպես բանաստեղծի մյուս գործերի, այնպես էլ «Տրտունջք»-ի վերաբերյալ բավարարվել է բնութագրական շատ կարճ խոսքով[6]: Գրեթե նույնն ենք տեսնում, օրինակ, նաև 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հմուտ գրականագետ Վահան Նալբանդյանի (1876-1902)՝ բանաստեղծի ծննդյան հիսունամյակի առիթով «Մշակ»-ում տպագրած հոդվածում[7]: Համարյա համանման դրություն է նաև Պ. Դուրյանի գործի ամենախորունկ ու նրբանկատ ուսումնասիրողներից մեկի՝ Սիմեոն Հակոբյանի մոտ. «Բանաստեղծութիւնը սկսւում է մի սրտամորմոք բացականչութեամբ, որ քերթողը հանում է իր էութեան խորքից եւ որով հրաժեշտ է տալիս Աստծուն եւ արեւին»[8]:

Վիճակը կարծեք մի փոքր փոխվում է Սաքո Սարգսյանի մոտ, ով «Տրտունջք»-ի սկսվածքի մեջ, բացի հրաժեշտի տրամադրությունից, տեսնում է նաև խռովք: Սակայն գրականագետը իր այդ միտքը չի տարրալուծում, և նրա հետագա խոսքը գերազանցապես դառնում է գեղարվեստական պատկերավոր խորհրդածություն, որից, թող կոպիտ չինչի, տուժում է վերլուծությունը: Ահա. «Խռովքի, հրաժեշտի տրամադրությամբ սկսված («Է՜, մնաք բարով Աստված և արև, որ կը պըլպըլաք իմ հոգվույս վերև…») բանաստեղծությունը հիշեցնում է ստվերոտ թփուտների միջով հոսող այն մեղմ, հանդարտ գետակին, որն անընդհատ թափվող հեղեղաջրերից հորդանալով, բարձրանալով, փրփուրի երես է հանում իր հատակի տիղմն ու ավազը և դուրս նետելով քարքարոտ ափերից, հողմադալար ոստույնով թռչում է առաջ…»[9]:

Իսկ, օրինակ, Ա. Շարուրյանը գրում է. «Տրտունջքը» քնարական

---

[6] Տե՛ս **Ա. Չոպանյան**, Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը, Եր., 1967, էջ 206-207:

[7] Տե՛ս **Վ. Նալբանդեան**, Պետրոս Դուրեան, «Մշակ», Թիֆլիս, 1901, №№ 167, 168, 169, 170:

[8] **Ս. Յակոբեան**, Պետրոս Դուրեան, Վիեննա, 1922, էջ 157:

[9] **Ս. Սարգսյան**, Պետրոս Դուրյան, Եր., 1959, էջ 112-113:

մենախոսություն է, որ հեղինակը բաժանել է երեք հատվածի: Առաջին հատվածը (26 տող) բանաստեղծի «մնաք բարևն է» աստծուն և աշխարհին»[10]: Հրանտ Թամրազյանը, որ Ա. Շարուրյանի վերլուծությունը համարում է հապշտապ[11], ինքն էլ իր «Պետրոս Դուրյանի կյանքի երկու օրը («Տրտունջքը» և «Զղջումը»)» մեծարժեք հոդվածում քերթվածի առաջին տողերի մասին գրում է միայն հետևյալը. «Ուշադրություն դարձնենք բանաստեղծության ներքին հոսանքին: Բողոքի առաջին իսկ ալիքին միանում է ցաված սերը դեպի իրեն այնքան հարազատ թշվառ հոգիները…»[12]: Այս տողերին հաջորդում է քաղվածք բանաստեղծությունից՝ առաջին վեց տողը՝ իբրև մեջբերում, և վերջ: Հաջորդ պարբերությունը արդեն վերաբերում է բանաստեղծի հոգեխռով վիճակից ծնված այն տարտամությանը, թե «Պահե՞լ է Աստված բանաստեղծին մի «ետքի» կյանք, երբ արդեն փակում է մարդու հայացքը այս աշխարհի հանդեպ…», «Կա՞ն թե չկան հանդերձյալ աշխարհը, «ետքի» կյանքը, հոգու հայրենիքը»[13]:

Ինչևիցե, վերադառնանք «Տրտունջք»-ի առաջին տողերին. «Է՜հ, մընաք բարով, ***Աստված*** և ***արև,*** // Որ կը պըլպըլաք իմ հոգվույս վերև…» (այս և հետագա ընդգծումները մերն են- Վ. Ա.): Ի՞նչ են թաքցնում այս տողերը: Մեր համոզմամբ՝ Պ. Դուրյանի՝ Աստծուն և արևին ուղղված «մնաս բարով»-ի արտաքին հանդարտության ու տրտմության խորքում դառնություն կա, դառնություն՝ տառապանքի մի կծու շեշտով: Արտաքնապես այնքան հանգիստ ու պարզ ասված այդ խոսքերը ողբերգության մեծ խորություն ունեն և իրենց մեջ խտացնում են անսպառ ցավ: Այդ «մնաս բարով»-ի մեջ ամփոփված է բանաստեղծի հոգու պատկերը՝ ողբը, հուսահատությունը, դատապարտվածությունը: Գալարումը, ճիշտ է, դեռ չկա, սակայն հուսահատության բողոքի ձայնը լսվում է: Մեր համոզմամբ՝ դրաման սկիզբ է առնում հենց այստեղից:

Հրաժեշտը արևին բանաստեղծի՝ ***իրական կյանքից*** մոտալուտ բաժանման թաքուն ցավն է, որ կուտակվել է նրա սրտում: Այդ թվացյալ հանգստության տակ պետք է գուշակել դատապարտվածության մի թանձր զգացում, որը խոսքի մեղմության պատճառով գուցե ակնբախ չէ, սակայն կա: Արևը խորհրդանշում է կյանքը, ուրախությունն ու ջերմությունը, սերն ու բնությունը, այն ամենը, ինչը առարկայապես շրջապատում է բանաստեղծին, ինչը զգայելի է: Ուրեմն՝ նրա մնաք բարովը իր հոգու վերև «պլպլացող» արևին այլ բան չէ, քան վաղաժամ վշտագին ու կսկծահար հրաժարումն աշխարհից: «Մնաք բարով»-ը Արևին Արևից զուրկ մնացած պատանու սրտի հառաչն է:

Շատ ավելի սոսկալի ու ապշեցուցիչ է, սակայն, Դուրյանի հրա-

---

[10] **Ա. Շարուրյան**, Պետրոս Դուրյան, Եր., 1972, էջ 230:
[11] Տե՛ս **Հր. Թամրազյան**, նշվ. աշխ., էջ 53:
[12] Նույն տեղում, էջ 61:
[13] Նույն տեղում, էջ 61, 62:

ժեշտը Աստծուն: Իրական կյանքում արդեն ֆիզիկապես տանուլ տված բանաստեղծը, որ շուտով պատրաստ է աշխարհից քաշվելու, թվում է, թե պետք է, տաղտուկ աշխարհը մերժելով, ձգտի դեպի երկինք, կառչի Աստծուն՝ նրանից ակնկալելով սեր ու փրկություն: Սակայն նրան էլ է մնաս բարով կարդում և առաջինը հենց նրան է հրաժեշտ տալիս: Իսկ ո՞վ է Աստված Դուրյանի աշխարհայեցողության մեջ… Համենայն դեպս ոչ վերացական մի երևույթ: Այստեղ հիշատակելի է Արշակ Չոպանյանի պատմածը պատանի Դուրյանի մասին. «Պետրոս Դուրյան դպրոցասեր և կրոնասեր եղած է իր ամբողջ մանկության ընթացքին… Դպրոցական եղած միջոցին, հաճախ տեսած են զինքը, որ առտուն վարժարան երթալե առաջ եկեղեցին հանդիպած, մոմ մը վառած և աղոթք մը ըրած է»[14]: Իսկ բանաստեղծի կյանքի վերջին տարվա մասին գրում է. «Աստուծո վրա Դուրյանի մտածումը մութ է և տատամսոտ՝ այդ վերջին տարուն մեջ: Առանց իր Լութֆյան բարեկամին պես անհավատ մ՚ըլլալու, իր պատանության առաջին շրջանի խորին բարեպաշտությունը իր կյանքի այդ վերջին ամիսներուն քիչ մը խախտած էր: Տարակույսի ու բողոքի վայրկյաններ ունեցած է ֆիզիկական ու բարոյական տառապանքի անդիմադրելի ճնշումին տակ»[15]:

Հարցի կապակցությամբ ուշարժան է և Ա. Շարուրյանի տեսակետը. «Դուրյանն, ինչ խոսք, հավատում էր աստծուն, սակայն դա կույր հավատ չէր»[16]: Հրանտ Թամրազյանն էլ, անվերապահորեն ընդունելով այս տեսակետը, նկատում է, որ «Դուրյանը աթեիստական հայացքների համակարգ չի ստեղծել, իսկ «Տրտունջքն» էլ հենց ուղղված է աստծուն»[17]: Ուրեմն՝ եթե Դուրյանը ջերմեռանդ հավատացյալ չէր, ապա, վստահ կարող ենք ասել, նաև անաստված չէր: Ասել է թե՝ նրա համար Աստված կար, և նա ամենուր էր, նաև երկնքում, հանդերձյալում: Սա ինչո՞ւ ենք ասում. որպեսզի մեկ անգամ ևս համոզիչ դառնա, որ բանաստեղծի հրաժեշտը Աստծուն ստեղծագործական հնարք ու հնարանք չէ, որոնց կարող էր դիմել նա՝ իր դժգոհությունը ավելի ազդեցիկ արտահայտելու համար, այլ «հուսահատության գալարումներից» ծնված անկեղծ հրաժարում ու մերժում: Սակայն ումի՞ց… Աստծո՞ւց: Աստծո՞ւց, որ դուրս է ժամանակից ու տարածությունից և խորհրդանշում է հավիտենական կյանքը, որի մարդասիրությունը բազմիցս փաստված է միայն Աստվածաշնչով: Ուրեմն՝ Դուրյանի կրած անլուր տառապանքները նրան հասցրել են այնտեղ, որ նա հոգեկան և ֆիզիկական տագնապի մեջ ամբողջովին կորցրել է հավատը աստվածային կարեկցանքի հանդեպ և մնաք բարով ասելով Աստծուն՝ նաև այդ կերպ արտահայտել իր դժգոհությունը նրանից: Բանաստեղծության հաջորդ

---

[14] **Ա. Չոպանյան**, նշվ. աշխ., էջ 19:
[15] Նույն տեղում, էջ 66-67:
[16] **Ա. Շարուրյան**, նշվ. աշխ., էջ 233:
[17] **Հր. Թամրազյան**, նշվ. աշխ., էջ 50:

տողերը, որ շիկացած են մարդկային տառապանքով և Աստծու դեմ ուղղված դառնակսկիծ հեգնանքով ու հանդուգն խրոխտանքով, հաստատում են մեր կարծիքը.

Աստղ մ'ալ ես կ'երթամ հավելուլ երկնից,
Աստղերն ի՞նչ են որ, եթե ո՛չ անբիծ
Եվ թշվառ հոգվոց անեծք ողբագին,
Որք թրռին այրել ճակատն երկնքին.
Այլ այն Աստուծույն՝ շանթերո՛ւ արմատ՝
Հավելուն զենքերն ու զարդերն հրրատ…:

Վերաիմաստավորելով աստվածաշնչյան խորհրդաբանությունը, ըստ որի՝ աստղերը Աստծու հրեշտակներն են[18], Դուրյանը նրանց տվել է նոր իմաստ ու խորհուրդ: Ի դեպ, Սիմեոն Հակոբյանը Պ. Դուրյանի՝ աստղերի վերաբերյալ արած խորհրդածությանը տվել է այլ մեկնաբանություն. «Չէ՞ որ դիցաբանական հաւատալիքի համաձայն երկնքի վրայ ցրուած անթիւ աստղերը մեռած մարդկանց հոգիներն են, որ առկայծում են յաւիտենօրէն,- գրում է նա և անմիջապես շարունակում:- Անշուշտ Պետրոս Դուրեանի տողը դիցաբանական այդ հաւատի արտայայտութիւն չէ, այլ միայն հնադարեան ժամանակից մնացած բանաստեղծական գեղեցիկ ձեւ է, որ մինչեւ օրս էլ գործածական է մեր ժողովրդական խօսքի մէջ»[19]: Այն, որ աստղերի խորհրդանշական իմաստը տվյալ դեպքում մեկնաբանվում է ըստ դիցաբանական պատկերացումների, ոչինչ առարկելի չկա, սակայն ասել, թե այն բանաստեղծի համար ընդամենը «գեղեցիկ ձեւ» է, կարծում ենք՝ ճիշտ չէ: Այս կապակցությամբ տեղին է հիշել Վահան Նալբանդյանի խոսքը՝ ասված հենց Պ. Դուրյանի վերաբերյալ. «Իսկական արուեստագէտը-մանաւանդ ռոմանտիկները-արտաքին իրերը, բնութեան այս կամ այն տեսարանը՝ հասարակ մահկանացուի նման միայն իր սովորական, զգայական երեւոյթով չէ ըմբռնում, այլ դրանց մէջ՝ համաձայն իր հոգեկան տրամադրութեան՝ տեսնում է մի-մի խորհրդանշան: Այսպէս էլ մեր բանաստեղծը (Պ. Դուրյանը- Վ. Ա.). նա բնութիւնը երբէք չէ նկարագրում զուտ նկարագրութեան համար, այլ ամեն անգամ գունաւորում է իր ներքին տրամադրութեան դրոշմով, հոգեկան զուարթ կամ տխուր վայրկեանների ներշնչումներով»[20]:

Ուրեմն՝ բանաստեղծության հիշյալ տողերում Դուրյանը ստեղծել է իր խորհրդաբանությունը, որտեղ աստղերը թշվառ հոգիների ողբագին անեծքն են, որ թռել են՝ այրելու ճակատը երկնքի, մի բան, որ կար-

---

[18] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Հին հաւատքը կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1910, էջ 115:

[19] **Ս. Յակոբեան**, նշվ. աշխ., էջ 157:

[20] **Վ. Նալբանդեան**, նշվ. աշխ., № 169:

ծեք, իր նախորդող խոսքից վերացած, ասում է և Ս. Հակոբյանը. «Բանաստեղծութեան հետեւեալ հինգ տողերի մէջ (նկատի ունի «Աստղերն ի՞նչ են որ,…» տողից «Հավելուն զենքերն ու զարդերն հըրատ…» տողը ներառյալ- Վ. Ա.) Պետրոս Դուրեան փիլիսոփայական խորհրդածութիւն է անում աստղերի շուրջը: Նրա բանաստեղծական արտայայտութեամբ աստղերը *անբիծ* եւ *թշուառ* ոգիների ողբագին անէծքն են, որ գնում են երկնքի ճակատը այրելու, իբրեւ գերագոյն բողոքի նշան»[21]:

Երկնքի, որ խնամող ու հոգացող է, մխիթարող և սփոփող, դեպի որն ուղղված են երկրային իղձերն ու ցանկությունները՝ որպես փրկության միակ հնարավորություն: Սակայն բանաստեղծը, հայտնված անհուսության մղձավանջի մեջ, կորցրած հույսը, ինքն էլ խարանում է երկնքի ճակատը իր անեծքով: Իսկ այստեղ երկինքը մի՞թե Աստծուն էանշող այլաբերություն չէ. չէ՞ որ Աստված նաև վերևում է՝ երկնքում[22]: Եթե որոշ տարակուսանք կա էլ, ապա հաջորդ՝ ***Այլ այն Աստուծոյն՝ շանթերո՛ւ արմատ*** տողով, կարծում ենք, դա վերանում է, քանի որ խոսքային փոխաբերական այս միջավայրում *այլ* շաղկապով՝ *այլև, նաև, այնպես էլ* նշանակությամբ[23], Աստված զուգորդվում է երկնքի հետ:

Բանաստեղծության այդ կարճ տարածության մեջ, ինչպես տեսնում ենք, ստեղծվել է լարված մի հոգեվիճակ, որն իր թափով ու ուժով համարյա չի զիջում հետագայում ասված, քերթվածի դրամատիկ լարվածությունը կիզակետին հասցնող տողերին, երբ հնչում է սպառնալիքի որոտը.

…Թող անեծք մ՚ըլլամ քու կողըդ խըրիմ,
Թող հորջորջեմ քեզ «Աստված ոխերիմ»:

Կարծում ենք՝ դժվար չէ տեսնել, որ վերևում հնչեցրած միտքը՝ «…Եվ թշվառ հոգվոց անեծք ողբագին, // Որք թըռին այրել ճակատն երկնքին», գրեթե նույն բովանդակությամբ, սակայն ավելի մեծ ուժով երկրորդվում է ժողովրդական արտահայտության երանգ առած «Թող անեծք մ՚ըլլամ քու կողըդ խըրիմ» խոսքով: Այսինքն՝ սա, ըստ էության, բանաստեղծի արդեն ասվածին շատ մոտ, եթե ոչ համարժեք, ապա համանման վերարտադրությունն է:

«Տրտունջք»-ի մասին մնացած ամեն ինչ կարծեք թե մանրամասն ասված և գրված է: Ինչ էլ ասենք, թվում է, դրությունը չենք փոխի: Մեր նպատակն էր նորովի մեկնաբանել «Տրտունջք»-ի առաջին տողերը և ցույց տալ, որ բանաստեղծության այդ կարճ հատվածում առկա է լարվածության մի հոգեվիճակ, որը հուզական վիթխարի ներգործություն է ունենում նրա հետագա ընթացքի վրա՝ շատ բանով պայմանավորելով

---

[21] **Ս. Յակոբեան**, նշվ. աշխ., էջ 157-158:
[22] Տե՛ս Աստվածաշունչ, Յեսուի գիրքը, գլուխ Բ, 11:
[23] Տե՛ս **Ա. Սարգսյան**, Արևմտահայերենի բառարան, Եր., 1991, էջ 17, **Ա. Սուքիասյան**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Եր., 2009, էջ 31:

քերթվածի հոգեկան բովանդակության ուղղվածությունն ու բնույթը:

Բանալի բառեր – *Հրանտ Թամրազյան, Ալբերտ Շարուրյան, Արշակ Չոպանյան, Աստված, արև, հրաժեշտ, ողբերգություն, հրաժարում, աշխարհայեցողություն, այլաբերություն*

ВАЧАГАН АВАГЯН – *Попытка новой интерпретации «Ропотов» П. Дурьяна.* – Смысловой и психологический анализ первых строк «Ропотов» Петроса Дурьяна показывает, что начальные строки чрезвычайно важны для внутреннего развития этого знаменитого в армянской поэзии стихотворения и во многом обусловливают его дальнейший вектор и сущность.

Ключевые слова: *Грант Тамразян, Альвберт Шарурян, Аршак Чобанян, Бог, солнце, прощание, трагедия, отречение, мировоззрение, аллегория*

VACHAGAN AVAGYAN – *An Attempt to a New Interpretation of Bedros Tourian's "Complaints".* – By detailed content and psychological analysis of the first lines of Bedros Tourian's well-known poem "Complaints," the article reveals the great importance of those lines for the poem's further inner development and highly outlines the direction and nature of its spiritual content.

Key word: *Hrant Tamrazyan, Albert Sharuryan, Arshak Chobanyan, God, sun, farewell, tragedy, despair, damnation, worldview, allegory*